57. ԹՈՒՃՐԻ ՏՂԵՆ

Կէղնի, չէղնի մեկ թուճարրմ կէղնի. թուճրին կէղնի մեկուճար տղե մը։

Էդ թուճար, եփ օր մեռնելու ժամանակ կէղնի, մեկ օրրմ իր տղին կասե, օսիաթ կէնե։

Կասե.—Տղա, լաո, քեզ օսիաթ, ամանաթ՝ քու կնիկ չը թողնիս ուրիշի տան, քու ձին չի տաս ուրիշի ձեռք, թաժա քավոր չբռնես, մեկել թաժա թուճրից առուտուր չէնիս։

Մնաց մեկ վախրտրմ, էդ թուճար մեռավ։ Թուճրի տղի աներձագ պսակեցին։ Հարսնիքի օր էկան իր կնկա ետև, իր հոր խոսք իր միտ ընկավ։ Կնկան տարան հոր տուն։

Տղեն էլ էլավ ասեց.— Ես զիմ հոր օսիաթ չըմ կորցու, ես պիտի փորձիմ, տեսնամ իմ հոր խոսք օղորթ է, թե՝ սութ։

Էլավ գիշերվան մեչ տղեն զուր հոր էղած դարամաթ, ինչ օր կերչկեր ղրմեն, տան տակ պահարան շինեց, պահեց, մինակ թողեց ուրանց համար մեկ քանի ջուլ ու մուլ ու ինք էլ չգնաց կնկա ետև։

Մնաց մեկ քանի օր. Ռուսաստանից էկեր էր մեկ պզտիկ թուճար, օր բան չըտեսեր էր, նոր սկսեր էր փոթի-մոթի ծախել։ Էտ տղեն գնաց էտ թուճրի մոտ։ Ասեց.—Ախբեր, կերևա տու թաղա ես էկիր ըստեղ, առուտուր կէնիս, մեկ քանի օսկի փարա տուր ընձի փոխ, մեկ-էրկու ամիս ժամանակ, ինչ վախտ օր չըտվեցի, ախբեր, իմ հորից մնացած մեկ ղսրախ ունիմ, կիտամ քըզի։ Ի՞նչ էնիմ, ախբեր, փորձանք էկավ գլխիս վերեն, ղրմեն էղած չէղած գնաց կորավ, փճացավ։

Առավ մեկ իրեք օսմանցու օսկի փարա, թուճար ասեց.—Ախբեր, գինա՞ս, շուտ զիմ փարեն բերիս, չըխապիս զիս։ Կիգամ, քու ղսրախ քաշիմ, տանիմ զիմ փարի տեխ։

Մարթն էր, առեց զփարեն, տարավ ուր տուն, մառան, էն մեկ քոշեն, դրեց քիսի մեշ, կախեց պատեն։

Մեկ քանի օր հ՚ընցավ մեշտեզ, էլավ մարթն գնաց կնկա ետև, առավ ուր հետ, էկավ։ Կնիկն էրկու հոգով էր, աստծուն տված կնիկ պառկավ, բերեց մեկ տղե մը։

Մարթն ասեց.—Էտի լավ էր, աստված ընձի տղե մը տվեց, քավոր լե կփոխիմ, զիմ հոր օսիաթ լե կճըռպեմ։

Զըմեն տրկիցներ, ով կեր քաղքի մեշ, լսեցին ասին.—Ափսո՞ս, էտ թուճրի տղեն խեղճըցեր է ու ինկեր է ետին հաց։

Մեկ ուր տնեն շուրվե մի կբերեր, մեկ ուր տնեն հաց կբերեր։ Կընկըտիք կիգեն կնկա խեշ, կիտեն էն էրեխին։

Էկավ կնքելու ժամանակ։ Մարթն էլավ զուր քավոր փոխեց, թաժա քավոր բերեց, կնքեցին զտղեն։

Մնաց մեկ ամիս, ամիս ու կես, էկան էդ մարթու կնիկ տարան հերանց տուն, հարսնիք կեր գեղի մեշ, ուտել խմելու օր էր։ Ախչկա տուն օր էնպես նեղ էր, բան չըկեր, ասեցին. «Բերենք զմեր ախչիկ համ մըզի էլ կօգնե, կտորըմ հաց լե ուրեն կուտե, տեսնենք ի՞նչ կէղնի»։

Մարթն ասեց.—Ախբեր, հ՚որի՞ զիս լե չըք կանչե հարսնիք, չէ՞ ես լե ձըր փեսեն իմ։ Ապա էն վախըտ ինչ ընձի կեր, տուք կիգեք, կուտեք, էդ իմա՞լ էր։ Մկա դինաք օր կտրեր է հ՚մեն բան վերես, իմ երես լի չըք իշի։ Ես զիմ կնիկ չըմ թողի տանեք, ես կպահեմ, աստված օղորմած է։

Հերսոտան, առան զկնիկ, տարան։ Ասեցին.—Տու կարցար զքըզի պահեցիր, ըստաղն չըթողե մեր ախչիկ լե տանենք հերանց տուն, մեկ-էրկու օր կյանք էնե։

Առան զկնիկ, տարան հոր տուն։

Մեկել տեսնանք թաժա քավոր էկավ.—Բարև, սանհեր, ի՞նչպես ես, քեֆտ լավ է։ Էկեր իմ էսօր բա մը կուզիմ, խընդրիմ, օր զիմ խաթըր չը կոտրիս։

— Տո, քավոր աղա, խուրբան, ես զքու խաթըր կկոտրի՞մ, շա՚մը ունիմ, էն լե քու ուղուրին է։ Ի՞նչ է կըսիս, ասե՝ տեսնանք։

Ըսեց.—Սանհեր աղա, ձին իտեր, քիչ մի հեծնեք, մըր ընկերներ տեխ կէրթան։ Կուզիմ ես լե էրթամ, ձիով օլորտիմ հետ ուրանց։

Ըսեց.—Բան մը չըմ ասի, կիտամ, մինակ ձին քուռկով է, չէղնի թալե քուռակ։

— Սանհեր աղա, հրմալ բան կէ՞ղնի, հրմա էն տեխն է, կէրթամ դառնամ։

Զին հեծավ քավոր ու գնաց։

Փշու մը մնաց, սանհեր էլավ ընկավ ետև, զուր կեիմ լե փոխեց ու գնաց կծկավ մեկ տեխրմ, ասեց. «Տեսնամ, իմ քավոր ի՞նչ է կէնե իմ ձիու գլուխ»։ Տեսավ, օր քավոր ղսրախ էնպես վիսա կքըշե, քիչ մանցիր է, օր տե զքուռակ թալե։

— Տղա, լաո,—ասեցին,— էտ ձին վի՞րն է։ Մեղք է, քիչ է մնացիր զքուռակ թալե։

— Ախբեր,— ասեց,—թաժա սանհորն է, թալեց, թող թալե, ձըր բան չէ, քշեք։

Քշեցին, նաֆասըմ գացին էկան, վալա, ղսրախ զքուռակ թալեց։

Ընկերներ ըսեցին.— Տղա, լաո, անաստված օղլի, թալեց զքուռակ։

Քավոր ձեն չը հանեց, իշավ ձիուց, վերուց զքուռակ ու տարավ քըփսեց մեկ փըշբըլի մը տակ։ Ու բոռաց ասեց.—Քշեք, քշեք, ձըր հ՚ըմնու գուման կփերեմ։

Սանահերն էնտեղ պատվըտուկ էր, ըսեց՝ իմ հոր օսիաթն էլավ։ Վերուց զքուռակ, զարկեց ուր հին չուբի տակ, բերեց տուն, կախեց թուճրի տված փարի կուշտ։

Փշու մը մնաց. տեսավ օր տե թաժա քավոր էկավ։ Բերեց ձին, տվեց սանահոր, ասեց.—Սանհեր, խուրբան, առ ձին, սաղ-սալամաթ, մեկ կտոր տեխ իմ գացեր, էկեր։

— Է,— ասեց,—քավոր շան, տու գինաս, ես բան չըմ ասիր։

Քավոր գնաց, փշու մը մնաց, էն փարի տվող թուճար էկավ։

Ասեց.—Է, ախբեր, զիմ փարեն հ՚ո՞րի չըս իտա, հերիք չէ՞։ Գինա՞ս, հանդե կմտնիմ թավլեն, կտանիմ զձին։

Նոր ինչ հալով էլան ընդոր դրկիցներ ընկան մեչ, ասին.—Ախբեր, խեղճ է, մեկ քանի օր լե համբերե, կիտա զքու փարեն։ Թ՚ էղնի քու հոր մեռելներու խեր։

Ինչ հալով ճամբցուցին զմարթ։ Մնաց մեկ քանի օր, էլավ, ասեց.

— Էսօր կէրթամ իմ անեբոչ տուն, տեսնամ հրմալ ի՞նչ կէնին, ինչ չըն էնի։

Գնաց էտտեղ, զարկեց զտուռ, էկան տեսան, օր փեսեն է էկի։ Գացին զոքընչին ասին. «Էկավ քու փեսեն, կանիը է տուռ»։ Հ՚որի օր տան մեծ զոքանչն էր։

Զոքանչ էլավ էկավ, ասեց.— Է, կեր տնիմ քու քիթ ու բերան։ Ի՞նչ էմլե էկեր իս, ասե տեսնա՞մ, ա՞ղն է պակաս, մա՞ղն է պակաս։ Հ՚ուբ

վե էկեր իս, գնա, գիմ ախչիկ չըմ թողի իդա, ետ տարցի։

Խեղճ փեսեն զնիյաթ էրեց, ասեց.—Մայրիկ, ի՞նչ կէղնի, ես լե գամ, հարսնից տուն է, մե քիչ սիրտս կբացվի։

Համա զոքանչ հերսոտավ, քուֆրըմ, էրկու լե վերեն տվեց, ասեց.—Դե, շահնըմի, գնա։

Է, ի՞նչ էնե խեղճ փեսեն, անձեն, անձուն էլավ գնաց։—Հեյ գիդի,—ասեց,— իմ հոր օսիաթներ հ'ըմեն էլավ։

Նստավ, փշու մը մտածեց, ըսեց. «Վալա, ես մե բան պիտի էնիմ»։ Էլավ զուր առաչվան շորեր հագավ, զբոչամ սրսրեց, էնպես լավ մը զինք շինեց, առավ զուր ընկերտանք, ասեց.—Տղեկներ, ինչքան ծախս կէղնի, զըմեն իմ վերեն է, մինակ իմ գործին չըխառնվեք, իմալ կասեմ, հըմալ էնեք։

Ինչ խըդար ուրանց բան պետք էր. գինի, ըռաղի, օչխար տվեց մորթել, զըմեն ուրանց հետ առան ու գացին իտա տեխ։

Ուր աներոչ տան վերև մեկ բախչե մը կեր, նստան էնտեխ։ Կուտին կխմին, զուռնեն ու դըֆիր կզարկին, ուրանց էրած մալ կխաղան, օր զինք աստված աղատե։

Փշու մը մանցինք, տեսանք օր աներանց տնեն էլան, իշեցին, տեսան։

Մեկ տղե մը տարցավ ներս, ըսեց.—Տղա, լաո, էտ ի՞նչ քեֆ է, էտ ի՞նչ բան է։ Մարթ քեֆ կէնե, հմալ քեֆ թ'էնե։ Մենք լե կասինք՝ մենք մարթ ինք, էկեր ինք աշխար։

Ասեցին.—Օր հըմալ է, թաժա թուճար է էկիր, կանչինք պատիվ։ Բալքի քանի մը օսկի իտա հըլղաթ հարսին։

Մութն էր, էլան էրկու-իրեք հոգի, զֆանըրներ կպուցին, գացին էնտեղ։

Մեկն ասեց.—Ախբեր, ամոթ չհամարվի, ձըր մեծ ո՞ր մեկն է։ Մըր տուն լե ուրախութենի օր է, թ'իդա էնտեխ, տեսնանք՝ կհավնի մըր քեֆին։

Վալա, տղեկներու սիրտ կթփթփա, կըսին.—Վախենանք, չի գա։

Թուճար էլավ, ասեց.—Քելեք էրթանք։

Էլան, գացին տուն, թուճար նստավ էնտեխ՝ ուր զոքընչի խեչ։ Դե, Մշու քեֆ է, խման մեկ-մեկ ստաքան զինի ու խառվան հ'իբար, հարգա-բուրդա կխաղան։

Թուճար ասեց ուր զոքընչին.— Մայրիկ ջան, մեկ բան հարցում, չըմ իշխնա, տու դողրին ասե ընձի։

Անկըշվընե դողտուկ կասե։ Կնիկն էլիր էր, պար պռնիր էր, կխաղար։

Ասեց.—Մայրիկ, էնա վի՞ր հարսն է։ Ջըս կա՞ռնա խոսա զէտ հարսի հետ մեկ-էրկու իրեք սահաթ տեսնըվինք։ Ախբեր ես վաճառական մարթ

եմ, մկա էստեխն իմ, քիչ վերչ կէրթամ։ Ինչքան օսկի օր կուզես, ես քըզի լե կիտամ, ուրեն լե կիտամ։

Հանեց մեկ տաս, տրսնըհինգ օսկի, ճըխթեց պառվու ձեռք. պառավ էլավ, գողտուկ կանչեց ղախչիկ, ասեց.— Լաո, արի փշու մը զքըզի շինե, հարսնիքի տուն է, օտար մարթ է էկեր էստեխ։ Մկա, լաո, խեղճ ես տուն, քու կարած պատանք իրիկ տեսնաս ինչ վիճակի մեչ է, էսա վաճառական էկեր է ըստեխ, լաո, մեկ գիշեր է, ինչ կէղնի։ Առ էսա հինգ օսկին, գացեք էնա ներսընտուն, փշու մի խոսացեք, բան չըկա։ Էրթալոս վախըտ լե քըզի օսկի կիտա։

Վալա, մեր խափըռտեց ղախչիկ, ախչիկ ի՞նչ էնե, էն լե կնկախելք էր, համոզվավ, գնաց։

Թուճարն էլավ, գնացին ներս, ուրանց քեֆ էրեցին, խոսացին, ինչ օր էրեցին, տղեն էլ էնտեղն էր ճղորի մեչ դրած, մարթ կընկան ասեց.— Դե, տու էլի գընա օր ես մինակ էլնիմ տուրս։

Մեկ հինգ-վեց օսկի լե էն վախտ տվեց կընկան, կնիկ էլավ դուս։ Բռնեց պար ու խաղցավ։ Էրեխեն միտ կընկնի, բա՞ն միտ կընկնի։

Մարթն էլավ, առավ ուր էրեխեն, գողտուկ փախավ գնաց, ասեց.— Տղկներ, շուտ էլեք էրթանք։

Էլան, ինչ օր կեր էտտեխ՝ ժողվեցին, էկան։ Զընկերներ տրեց ճամբու, գացին։ Բերեց ղէրեխեն տրեց ճղորի մեչ, պտուկ տրեց բերան, կախեց պատեն, ղարախի քուռկի խեչն ու թուճրի փարի խեչ։

Կնիկն պարեց պրծավ, ասեց.—Էրթամ, տեսնամ էրեխեն իմա՞լ է։

Գնաց, տեսավ օր երեխա չըկա։ Էկավ ասեց.—Անա, տու ավրեցիր զիմ տուն, զքում լե վրեն, էրեխեն, գացի իշկեցի, չկա, չըգտա, կորեր է։

Ի՞նչ էնին, հ՞ուր իշեցին, չիշեցին, էրեխա չկա, իլախեն կտրեցին նստան մեկ տին։ Ասեց.—Ապա անա, իմա՞լ կէղնի։ Էդ քու կարած պատանք փեսեն հասկնա, ի՞նչ շուհաբ իտամ։

— Լաո,— ասեց,— մը վախենա, ես զէտ բաներ գինամ, կշինեմ։ Մեկ տերտերոչըմ կիտանք հինգ մաշիթյա, էն վախըտ օր քու մարթ կհարցու, կասենք օր կուկլուկ կպավ մեռավ։

Վալա, բերեցին տերտերոշ տվեցին հինգ մաշիթյա, խոսացին, տերտերն էլ ասեց.—Օրհնածներ, անհոդ մանցեք, մը վախենեք, ես հոգոցըմ լե կասիմ, կփրծնիմ։

Էտոնք էտ մուշավարի մեչն են, մեկել տեսան օր տե փեսեն էկավ։ Տուն քիչըմ բան ու ման առիր է, պատրաստի դրիր է էնտեղ։ Բացեցին զտուռ, էկավ փեսեն ներս, բարև տվեց նըստավ։

28—915

— Է,— ասեց,— բեբախտներ, զհարսնիք կերաք մինակ, զիս չըկանչեցիք։ Զասեցիք, թե փեսա կա մըզի, չկա։ Հար ես լե իմ օտոք էլա, էկա։

Քիչըմ նստան խոսացին փեսի հետ քթով, մռթով. ինչ օր կխոսեն լե, էրեխի խաթրի համար էր, կխոսեն։

Փշու մը մնաց, փեսեն ասեց.—Ախչի, էրեխեն ո՞ւր է, առ էրթանք։

— Վալա,— զոքանչ ըսեց,— ախ, քոռնենք, կուրնենք, մենք լե զէգ ժզուլն է կիլենք, տու էկար։ Ծրեկ էրեխեն կպավ կուկլուկ, մեռավ։ Էտա մըր տըրկից տերտեր լե հոգոց ըսեց, կանչենք, թը խոսա։

Ճիժըմ ճամբեցին տերտերոչ ետև, բերեցին զտերտեր։ Էն էլ ուր կողմից խոսաց փեսին, քիչ համոզեց, ըսեց.—Օրշնածներ, աստված մեծ է, մեկ էլ կիտա ձըզի զավակ։ Է, ի՞նչ էնինք, քոռփա էրեխեն, ափսո՜ս, մեռավ։ Աստված տվեց, աստված տարավ։ Շատ մի լեք։

Փեսեն ասեց.—Օր հըմալ է, զոքանչ խաթուն, էլի առ զտերտեր, էրթանք մըր տուն։

Մեր, տերտեր, ախչիկն ու փեսեն էլան գացին տուն։

Փեսեն էլավ գնաց զոր թաժա քավոր կանչեց, էն թաժա թուճար ինչ փարեն առիր էր մոտեն, զէն լե կանչեց։ Ասեց.—Ախբեր, արի հ՝էսօր զքու փարեն կիտամ։

Թաժա թուճրի քեֆ էկավ, էլավ ընկավ հետ, էկավ տուն։ Զըմեն քոմեց տուն մեկ անգամ։

Նստան մեկ քիչ խոսացին։

— Կնիկ,— ասեց,— հ՝էսօր մեկ քիչ կերակուր-մերակուր պատրաստեր իմ, գնա մառան, տրուկ է թաճրիկ, առ էկո։

Կնիկն էլավ գնաց, մտավ ներս, տեսավ, ի՞նչ տեսնա՝ ճղորըմ կապուկ է էնտեխ։ Բանցրցավ, իշեց, օր ուր տղեն է, պտուկ լե բերան տրուկ։—Վա՜յ,— ասեց,—մերիկ, զիմ տուն իմալ ավրեցիր։

Կնկա չոքեր կոտրավ, ընկավ էնտեխ։

Փշու մը ժըղլան, տեսան կնիկ հ՝անգրցավ, փեսեն ասեց.— Զոքանչ, էլի, գնա իշե ի՞նչ էղավ, քու ախչիկ չէկավ։

Էլավ զոքանչ, գնաց։ Տեսավ օր ախչիկ նստեր է գետին, կիլա։

— Ախչի, ծամ կտրուկ, ի՞նչ էղավ, չէկար։

Ասեց.—Անա, զիմ տուն ավրեցիր, իշե հընդե էրեխեն էստեղն է։

Մեր տեսավ, էն էլ խուգումե ընկավ։ Էն էլ մնաց էնտեղ անհուշք։

Փշու մը լե ժըղլան, տեսան էն լե չէկավ։ Ասեց.—Քավոր աղա, խուրբան, գնա տես քու սանամերդ, ուր մեր ի՞նչ էղան, չէկան։

Էլավ գնաց քավոր, տեսավ զընդոք, հարցուց օր ճղորի խրսեն էնեցին, քավոր զգլուխ վերցուց վի, տեսավ զճղոր, աչկն ընկավ ձիու քու-

ռակ օր թալեր էր։—Է,— ըսեց,—սանամերտիք, տուք ի՞նչ իք էրի, ես էղա ոբսվա, էլ չըմ կարնա իշի իմ սանահոր էրես, գետինմտանքութեն է։

Էն լե խուդումե ռաշ եղավ, մնաց ընդոց խեչ։

Քիչըմ լե ժըղլան, քավոր լե չէկավ։

Ըսեց.— Տեր հայր, տեր հայր, էլի մեկ գնա տես, ի՞նչ էլան ընգոնք, չէկան։

Տերտերն էլավ, մտավ ներս.—Օրշնածներ,— բոռաց,—ի՞նչ էղավ ձրզի, հ՝անգրցաք։

Աչք քեսավ ճղոր, հարցուց.—Ի՞նչ էղե, ախչկներ։

Չէրեխի մասալեն խոսացին տերտրոչ. տերտեր օր հասկցավ էտ էրեխեն սաղ է, ասեց.—Կընկտիք, ձեր հեր անիծվի, իմ մորուք պիտի իտաք թրաշել։

Տերտերն էլ ընկավ էնտեխ, մնաց։

Տեսան տերտերն էլ չէկավ։ Թաժա թուճրին ասեց.—Ախբեր, գնա տես էտ ժողովուրթ գացին էնտեխ, ի՞նչ կէնին, հ՝անգրցան, չէկան։

Էլավ թուճար լե գնաց։ Մտավ ներս, էն լե իրողութեն իմացավ, տեսավ օր պատեն քիսե մի կախուկ է։ Բացեց, իշեց, ի՞նչ իշե։ Տեսավ օր ուր տված փարեն է։ Վերուց զուր փարեն, թալեց շեր։

Քիչ մանցին, մարթ էլավ գնաց ներս։ Ասեց.—Ախբեր, քու փարեն վերցի՞ր էս տեխից։ Դու գնա, աստված քու հետ էղնի։

Բերեց զտերտերոչ մորուք թրաշեց, ասեց.— Դու հարիր խուռուշի համար սութ հոգոց կասես։

Տերտերն էլավ տուրս, մորուք կընգուկ էր, որն օր տեսավ՝ ավըլնեռով տվեցին հ՝ետև։

Բռնեց զթաժա քուռակ, կապեց քավորոչ միճաց, մնաց կապուկ, էն լե փախավ։

Ի՞նչ էնե, ուր կնիկն է։ Բերեց ուր տուն, նստան խոսացին, ամեն մեկ եղելութեն պատմեց կնկան, ղոքընչին, զուր առչըվան դարամաթը լե զըմեն հանեց գետնի տըկից, ինչ հորեր էր։ Մեկ լե առչըվան պես ապրան մինչև վերջ։

Իմալ էնդոնք հասան ուրանց սրտի մուրադին, աստված էնե, հ՝մեն մարթ հասնի ուր սրտի մուրադին։ Ասեք ամեն։